

զհարկաւորացն բուն արկեալ ի վերուստ յետ մարդեղութեան Տեառն՝ կարգաւ իջաք, թէ ի մերոց վարդապետաց պատմարանեալքն եւ թէ յայլ լեզուացն ի մերս թարգմանեալք: Եւ զայս ի փառս մարմնացելոյ Բանին Աստուծոյ, ընդ Հօրն երկնաւորի եւ սուրբն Հոգւոյն ճշմարտի, երբ յաւիտենիւ. ամէն:

(Յաւելուածք C օրինակի)

Ժէ. Վէճ գայթակղութեանն. Բ. հատոր. առաջին պատմէ գալատառուհն եկեղեցեաց արեւելեանի եւ արեւմտականի. եւ երկրորդն պատմէ զխոզովութիւնս փափիցն ընդ թագաւորացն Գալլիացոց. եւ այլոցն եւրօպէականաց, ԽԳ գլխով, եւ է յօղուածովք բաժանեցեալ ի յունական լեզուէ:

ԺԸ. Պատմութիւնք Սինէացոց թարգմանեալ ի Մարգարէ Շահրիմանցոյ Նոր Զուրայու, լեզուէ յանկլիականէ ի հայս ԻԳ գլխով որպիսութիւն քաղաքաց, վարուց նոցա, եւ պետութեանց կառավարմանց նոցա, ելից եւ մտից բնական օրինաց, եւ քաղաքական աւանդութեանց նոցա, եւ բնասիրութեանց եւ կայսերականացն պերճութեանց. ի ՌՄՊԲ թուին Հայոց:

ԺԹ. Պատմագիրք Նազիր շահին թարգմանեալ է ի Պողոսէ Միրզայեան Համթեցոյ ի յԱնգլիացոց լեզուէ ի հայս:

Ի. Պատմագիրք ինչ՝ Չամչեանց Միքայէլէ Պօլսեցոյ, յԱզամայ մինչեւ ի ՌՄԼԵ թիւն, գիրք երեք, եւ 6 հատոր, զոր ճշմարտութիւնն յայտնի է բազում տեղիս:

Բայց որովհետեւ գիրն յազգիս մերոյ իբր սեռ գոլ երեւի, ոմն պատմագիրն տեսակ համաթուի, վասն որոյ զոմանս զանյայտս յիշել մարթ վարկայ՝ վասն ծանօթութեանց եւ խնդրոց ոմանց:

Գ.

Վասն պատմագրաց Հայոց:

Այստեղ կը գետեղեմ նոր ցանկ մ'ալ Պատմագիրներու, զոր գտած եմ Անթիլիասի կաթողիկոսարանի վերոյիշեալ ձեռագրին մէջ, թղ. 107բ—108բ: Հետաքրքրական է Յանկա իր նոր անուններով: Առաջին անգամ հոս կը տեսնուի Երեմիա Չէլչպի Բէժմիւրճեանի պատմական գրուածքներու ցանկը, որ ուշագրութեան արժանի է: Այն հանուած է, ինչպէս կ'երեւայ, Երեմիայի մէկ հաւաքածոյ ձեռագրէ:

1. Եւսերի ի Յունաց թարգմանեալ եկեղեցական.
2. Ազաթանգեղոս.
3. Բիւզանդ.
4. Սոկրատ.
5. Մովսէս Պորենացի.
6. Ղազար.
7. Կորիւն.
8. Եղիշէ.
9. Փոստոս (= 3).
10. Զենոր.
11. Արիստակէս.
12. Շապուհ.
13. Յովհաննէս կաթողիկոս.
14. Ղեւոնդ էրէց.
15. Հերակլ (= Սերիոս).
16. Ուխտանէս.
17. Ստեփաննոս.
18. Վահրամ¹.
19. Մխիթար.
20. Յակոբ.
21. Եսայի.
22. Սարգիս.
23. Վանական.
24. Մատթէոս էրէց.
25. Սամուէլ էրէց.
26. Դանիէլ.
27. Մատթէոս.
28. Վարդան.
29. Կիրակոս.
30. Հեթում.
31. Թօմաս եւ Առաքել.
32. Վարդան յետին պատմագիր:
33. Իսկ Երեմիայի՝
 - ա. զՄաճարացն եւ
 - բ. զԱնգլիոյն.
 - գ. զՍուտ Բրիտանիս եւ
 - դ. զՍուլթան Մահմէտին.
 - ե. զՕսմանցոցն Գ. հատորս. եւ
 - զ. զԼանկ Թամուրին².
 - է. զՊալիֆայիցն Պաղտատայ եւ
 - ը. զՊարսկացն.
 - թ. զՀոմայեցոց եւ
 - ժ. զՅունաց.
- ժա. զՆոր նահատակացն եւ
- ժբ. զՀրկիզութիւն Ստամպոլոյ.
- ժգ. զԱմերիկային եւ
- ժդ. զԱնաուտին.

¹ 2. վայրամ,
² 2. թամփուրին:

- ժե. զՀամառօտ Օսմանցոն.
- ժզ. զԲագրատունեացն եւ
- ժէ. զԿիլիկեցոցն համառօտ.
- ժը. զՄովսիսին համառօտ եւ
- ժք. զՉուառութիւնս Հայոց. եւ ի. զԺամանակագիրս. եւ իա. զԱշխարհացոյց. եւ իբ. Արարողութիւնք ոմանց ազգաց. եւ այլ բազումք. ըստ որում եւ սոյն մատենա մասնաւորապէս ժողովեալ:

Միխայէլ կաթողիկոս էր Ասորոց. որք ծանօթացեալ՝ Վարդան վարդապետն եւ թարգմանել զնորա Պատմութիւնն յԱսորոց ի Հայոց լեզու:

3. Յուցակ գրոց Ամիրսուլու վանաց:

Վարդան Բաղիշեցոյ զրասիրութեան գեղեցիկ գրաւականն է Գրացուցակը Ամիրզօլի վանքին, զոր կազմած է անձամբ, ինչպէս վերնագիրս ցոյց կու տայ:

«Այս են վարդապետական գրեանք ի վանքն Ամիրզօլու՝ համարով անջինջ յիշատակ գրեալ իմովս ձեռամբ Վարդանայ վարդապետի:

Սկ. «Ա. նախ .ե. Աստուածաշունչ, որոց յատկութիւն այս է... վջ. ա. Սիւնց. Առքին. (Սիւնեցի Առաքելին) երկար տաղ եւ ոտանաւոր վասն սուրբ Լուսաւորչին եւ Ներսիսի Հայրապետին եւ Յովակիմայ եւ Աննայի (այս ոտանաւորներու բուն հեղինակն է Առաքել Բաղիշեցի): Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն»:

= Էջմիածին, Թ. 737, թղ. 223բ—232բ: Հրատարակած Ս. Տէր-Յակոբեան, Վարդանայ վարդապետի Բաղիշեցոյ Յուցակ գրոց Ամիրզօլու վանոց. Արարատ, 1903, էջ 176—178 (Յատաջարան), 178—189 (բնագիր): Յանկուած են 193 գիրք կամ հատորներ, ձեռագիր եւ տպագիր:

4. Գիրք Աղօթից:

Սխալմամբ կամ շփոթութեամբ Վարդան Բաղիշեցոյ վերագրուած է Աղօթագիրք մը այսպիսի խորագրով. «Գիրք Աղօթից արարեալ երանելոյն Վարդանայ սրբազան վարդապետի Բաղիշեցոյ, ի պէտս աղօթասիրաց ազգիս: Կ. Պոլիս 1841:

Մկրտիչ եպ. Աղանունի, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, էջ 503—504, ուշագիր եղած է, որ Աղօթագիրքս 1841ի տպա-

գրութեան մէջ սխալմամբ Բաղիշեցոյ ընծայուած է, բայց ինքն ալ կը սխալի, երբ զայն 1321ին ապրող Վարդան Արեւելցոյ մը կը վերագրէ: 1734ի տպագրութեան մէջ անոր հեղինակը ցոյց տրուած էր «Երանելոյն Վարդանայ վարդապետի», որ Այգեկցին է:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԳՆՈՒՆԵԱՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն):

Փարպեցիին մօտ Ատոմի մասին բաւական շատ տեղեկութիւններ կը գտնուին: Կը յիշէ թէ՛ Վարդանանց ատեն «տէչն Գնունեաց Ատոմ» կը մասնակցի Աշտիշատի ժողովին եւ ստորագրութիւնը կը դնէ Յագկերտի ուղղուած թուղթին: Իսկ Վարդան Մամիկոնեանի ետուզեա գործունէութեան շրջանին եւ անոր մահէն վերջ անմիջորդաբար տեղի ունեցած անցքերու եւ դէպքերու ատեն Փարպեցին Ատոմ Գնունին չի յիշեր, այլ անոր տոհմէն՝ «Երանելին Վահան» որ Աւարայրի ճակատամարտին մէջ մարտիրոսական պսակով կը փառաւորուի (հմտ. վարդ եւ Եղիշէ՝ «յազգէն Գնունեաց մանուկն Վահան երիւք արամբք», էջ 225): Բայց կաշանաւորուած նախարարներու շարքին կը հիւսէ նաեւ Ատոմի անունը (էջ 273): Իսկ Վահանեանց ժամանակ անոր մասին ստէպ կը խօսի: Ահա՛ Ատոմ իր Առաստոմ եղբոր հետ Վահան եւ Վասակ Մամիկոնեաններու եւ Սահակ Բագրատունիի կողքին՝ հաւատարիմ ընկեր է խաղաղութեան ժամերուն եւ պատերազմի արհաւիրքներուն մէջ: Ահա՛ Ատոմ Կռուակս գիւղի մէջ Վասակ Մամիկոնեանի հետ, թէեւ Ատրվշնասպէն անուպսելի յարձակում կը կրէ, սակայն Վասակի խոհմութեամբը վտանգէն կը գերծանի եւ Ակոռիի մօտ 481ին ալ թեւը կը վարէ՝ օգնական ունենալով Առաստոմ եղբայրը: Պարսկական բանակը մինչ կը կարծէ թէ հայազունը փոքրիկ ընկաւոր «խելացնորեալ ի խնդիր մահու եկեալ է», Հայերը քաջաբար կը մաքառին եւ «Ատրվշնասպ անկեալ սատակէր»: Ատոմ եւ Առաստոմ ուխտագրութ Գեհհոն Սիւնին,

որ Գարջոյ մաղխազի նման թշնամիին կողմն անցած էր, կը հետապնդեն՝ ցանկանալով շար օրինակը ջնջել մա՛հով, բայց իրենց նետերը կը վրիպին եւ դատաւիբը խոյս կու տայ: Սակայն քաջամարտիկ Գնունիները ճակատափայրէն սիգապանձ կը մեկնին. Պատմագիրը կը վկայէ՝ «ի կողմանն Ատոմայ եւ Առաստոմայ բազումք մեռանէին ի քաջ արանց»:

Մինչ Ակոռի մէջ հայ բանակը յաղթութեամբ կը հրճուի, Վահան Մամիկոնեան սպարապետին գուժկան կը հասնի «Մեռա՛ւ քաջն Մամիկոնեան Վասակ... եւ արքն Գնունիք՝ Ատոմ եւ Առաստոմ եւ այլ ամենայն զօրքն Հայոց ի լանջակողմանս Ակոռոյ՝ տապաստ անկեալ դիակնացան»: Գուժի մէջ թիւր բարերաստօրէն դեռ լրիւ չտարածուած՝ մարտավայրէն աւետաւոր հրեշտակ մը կը ժամանէ: Այդ՝ Ատոմի եղբայրը Առաստոմ է, «որ ձայն բարձեալ գոչելով ասէր՝ «Յաղթեաց զօրութիւն սուրբ խաչին եւ միշտ յաղթէ»: Գնունի մը աւետաւոր կը զրկուէր, վասն զի Գնունիներու արժանիքը մեծ էր:

Միւսնոյն տարին (481) Ներսէսագատի ճակատին մէջ Ատոմ Գնունին Բաշղ Վահանունի եւ Բարգէն Սիւնի ու Պապակ Պալունի նախարարներու հետ կը պատերազմի պարսկական բանակին դէմ: Առաստոմի անուը կա՛մ լուծած է եւ կա՛մ նա այդ կուռին մէջ մասնակցութիւն չունի: Հուսկ ուրեմն Ատոմ — թէեւ ոչ անունով, այլ հաւանօրէն ինքն ըլլալու է՝ «երանելեա տերամքն Գնունեաց» — կը գտնենք ձարմանայնու (Կուր գետի մօտ) դաշտավայրին մէջ վահանեան պատերազմին մասնակցելով: Այս անգամ Մամիկոնեան սպարապետին առաջնորդութեան տակ կը կառավարէ իր խումբը՝ թեւ ու թեկունք ունենալով Արշաւիր Կամսարականի երեք կորիւնները: Այս պատերազմէն վերջ Փարպեցին Ատոմի եւ Առաստոմի անունները (հմմտ. էջ 135, 273, 395, 401—403, 418) այլ եւս չի յիշատակեր: Եւ արդէն ձարմանայնու պատերազմին լիակատար պատմութիւնը մեր ձեռքը չէ հասած: Կը կարծեմ թէ այս ճակատին մէջ կամ անոր յաջորդած մասնական գուպարածներու մէջ Ատոմ, գուցէ եւ Առաստոմ՝ Վասակ Մամիկոնեանի եւ Սահակ Բագրատունիի հետ նահատակուած ըլլան: Եւ այդ է պատճառը, որ Փարպեցին Ատոմ «երանելի» կը կոչէ: Պատմագիրը ուզած է եւ գրած սոյն ճակատամարտին մէջ նահատակուած մարտիկներու անունները՝

«Եւ կատարեցան յաւուրն եւ անուանքն են այսոքիկ...» (անդ, էջ 439): Եւ սակայն չկան անունները եւ յայտնի կը տեսնուի որ պակաս կայ — թուղթ հանուած է եւ կամ ինկած է:

Աւասիկ Ատոմ Գնունիի մասին հասած տեղեկութիւնները՝ քաղուած Ատոմեանց վկայարանութենէն եւ Եղիշէի ու Ղազարի Պատմութիւններէն:

Արդ հարց կը ծագի: Այս բոլոր տեղեկութիւնները մէ՞կ Ատոմի մասին են, թէ պէտք է զոյգ Ատոմներ ենթադրել կամ ընդունիլ:

Հ. Չամչեան (Պատմ. Հայոց, Բ., էջ 15, 21) նախ իրարու ազգական կամ տոհմակից երկու Ատոմ կը գանազանէ, մին՝ վկայարանութեան մէջ յիշատակուած նահատակ Ատոմն է, իսկ միւսը՝ Եղիշէի եւ Ղազարի յիշատակած Ատոմ Գնունին, որ Վարդանի եւ Վահանի դրօշներու տակ արիարար կը կուռի՝ հետապնդելով միւսնոյն քաղաքականութիւնը՝ առաջնորդուած կրօնքէ: Սակայն սոյնուր կը մտածէ երկու Ատոմներու մէկ անձ ըլլալու մասին (անդ, էջ 416):

Հ. Յ. Թորոսեան «Բագրատիկ»-ի մէջ (1899, էջ 66, 396 եւ 1900, էջ 102) «Ատոմեանց նահատակութեան ժամանակն եւ այլ հանգամանք» խորագրուած յօդուածին մէջ հետեւեալ պատճառներով կը ցուցնէ թէ՛ «Վարդանանց եւ Վահանեանց պատերազմներու մէջ յիշուած Ատոմ Գնունին չէր կարող միւսնոյն անձն ըլլալ, այլ երկու ուրիշ անձինք են»:

Ա. 450ին կը յիշուի Ատոմ Գնունին իբրեւ «մի ոմն ի մեծ նախարարացն» որ կարեւոր պարագաներու մէջ փափուկ պաշտօնով մը — պատգամաւորութեամբ — կայսեր կը զրկուի եւ այս՝ գուշակել կու տայ «ոչ միայն Ատոմայ պատուաւոր նախարարական տոհմէ լինելը, բարուց ազնուականութիւնը եւ գործունէութիւնը, այլ եւ անշուշտ տիոց հասունութիւնը, որով չէր կարող նուազ քան երեսնամեայ հասակի մէջ ըլլալ» (Բագմ. 1899, էջ 399): Ապա Աւարայրի ճակատին կը մասնակցի, Պարսկաստան կը տարուի եւ տարիներ յետոյ կը դառնայ «իբ բնիկ գաւառը ի տարածած հասակի խամբած եւ ձերացած զրեթէ»: Եւ յետոյ՝ «մնացած օրերը բռանձնութեան եւ հանդարտութեան մէջ անցուց, ինչպէս ըրին Բարգէն Սիւնի, Առնակ Ամատունի եւ այլք» (անդ, էջ 399): «Արդ, կը հարցնէ Հ. Թորոսեան «Ի՞նչպէս կարելի էր

յետ զրեթէ 20 տարիներու՝ նա զէնք առնուր դարձեալ եւ պատերազմի դաշտը իջնէր Վահանեանց հետ, մօտ եօթանասամեայ հասակի մէջ, մինչ պատմիչն (Փարպեցի) կը ներկայացնէ մեզ Վահանեանց զինակից Ատոմը բոլորովին երիտասարդական աշխուժիք լի եւ կրակոտ: Ըստ իս շատ դժուարին կ'երեւի այդ, բոլորովին անկարելի չըսելու համար» (անդ, էջ 399):

Հ. Թորոսեանի այս վարկածը հաւանական չէ կարելի նկատել: Ատոմի իբրեւ պատգամաւոր բիւզանդական արքունիքն առաջուճը եւ միանգամայն Աւարայրի պատերազմի մասնակցութիւնը Եղիշէի պատմած յարակից դէպքերով՝ դժուարին է ընդունիլ, ինչպէս վերը ակնարկեցի: Աւարայրի պատերազմի մասնակցութիւնը Ղազար չի յիշեր եւ Գնունիներէն Վահանի անունը կու տայ: Իսկ հայ պատուիրակութեան մէջ անոր անունը չի գրտեր, բայց զինքը ներկայ կը դնէ Աշտիշատի ժողովին (հմմտ. վերը): Այս ամէնն նկատի ունենալով՝ կարելի է եզրակացնել որ Ատոմ կրնար Աշտիշատի ժողովին «իբ վաւուրուն երիտասարդական հասակին մէջ» մասնակցել, որ Հ. Թորոսեանի համաձայն կրնայ քսանէն երեսուն տարիներու մէջ հասկցուիլ: Աշտիշատի ժողովի գումարումէն — 449 — մինչեւ ձարմանայնու պատերազմին վերջը — 482 (Յուլիս-Օգոստոս, Հ. Յ. Գաթրճեան, Տիեզ. Պատմ., Բ., էջ 55) ունինք 33 տարուց անջրպետ մը: Եթէ Հ. Թորոսեանի եւ մեր վարկածին համաձայն Ատոմ Վարդանի առաջին ձեռնարկներուն 20—30ամեայ նախարար էր, այն ատեն Վահանեան օրերուն կրնար իբրեւ 50—60ամեայ՝ գործօն անձ ըլլալ — ինչպէս Քաջն Վարդան (հմմտ. Բ. Վ. Կիւլիսէրեան, Եղիշէ, Վիեննա 1909, էջ 348) — եւ ոչ թէ «խամբած ձերուկ մը»: Այս կարծիքը հաստատելու կուզայ նոյն ինքն Եղիշէ, երբ Աւարայրեան պատերազմին մասնակից կը դնէ Վահան Գնունին, որ «մանուկ» էր: Մանուկ եղբոր մը գուցէ երէց եղբայրը՝ կրնար վերոյգրեալ տարիքն ունենալ: Եւ անոնց վերջնօրակը կը կազմէ Առաստոմ, որ Ղազարի մօտ այնպէս եռանդուն եւ կրակոտ կ'երեւայ:

Հ. Թորոսեանի երրորդ ապացոյցն է՝ «Եթէ Վահանի ընկեր Ատոմ նոյն էր Վարդանի ընկեր Ատոմի հետ, այն ատեն առաջնոյն բանակին մէջ պէտք էր առաջնակարգ դեր կատարել եւ ոչ երկրորդական»:

Կ'ընդունիմ, որ Ատոմ՝ Վահանեան ապատակութիւններու մէջ կարծես երկրորդական դեր կամ պաշտօն կը ստանձնէ, սակայն՝ ոչ միշտ: Ահա Ակոռի քով աջակողմեան բանակին գլուխն է եւ ձարմանայնու դաշտավայրին վրայ Վահանի աջ բազուկն է:

Հ. Թորոսեանի երրորդ ապացոյցն է՝ Վահան Մամիկոնեանի ընկերը Ատոմ «երբեք» չի յիշուր առանց իր Առաստոմ եղբոր, մինչ Վարդանի ընկերը Ատոմ միշտ առանձին կը յիշուի: Զորբորդ ապացոյցն է Ղազար Ատոմի գովեստ ու պատուանուն չի տար, մինչ այդ ընկեր էր. եթէ միւսնոյն Ատոմը Վարդանի եւ Վահանի գործակից էր եւ միթէ նա խոստովանող չէ՞ր: Վերջին ապացոյցն է՝ Պարսկաստան գացող կապեալ նախարարներէն բաց ի երեք մանկագոյններէն — Բարգէն, Մուշեղ ու Ներսէս — ոչ ոք Վահանեան մեծագործութիւններու կը մասնակցի. արդէն ննջած ըլլալով Գիւտ Կաթի օրով (482—483): Հետեւաբար այդ ատեն վախճանած էր նաեւ առաջին Ատոմ, որ կապուած նախարարներու մէջ տարիքով երիցագոյնն էր: «Ապա ուրեմն Վահանեանց նիզակակից Ատոմ Գնունին նոյն չէր առաջնոյն հետ, այլ ուրիշ անձն, եղբայր Առաստոմի, անշուշտ մերձաւոր ազգական եւ յաջորդ առաջնոյն յիշխանութեան Գնունեաց տոհմին, ինչպէս կ'իմանանք Փարպեցոյ վկայութենէն: Եւ այս երկրորդ Ատոմ Գնունին է, ըստ իս, որ իր ընկերօք նահատակուեր է ի Պարսից, եւ որոնք կը տօնուին մեր մէջ Ատոմեանց զօրավարաց կոչմամբ» (Բագմ. 1899, էջ 399—400):

Այս ապացոյցներու դէմ կարելի է առարկել, թէ Ատոմ անգամ մը առանձին յիշուած է եւ Ղազար զինքն ալ թէեւ մէկ անգամ «երանելի» որակած է եւ այն՝ իր մարտիրոսական օրհասէն յառաջ (էջ 434): Գարձեալ թէ գերի վարուող եւ վերագարձող նախարարներէն ոմանք, ինչպէս Հ. Թորոսեան կը հաւատէ, ապրած ու գործած են Վահանի օրով — այսպէս՝ Բարգէն: Արդ ինչո՞ւ ատնցմէ մէկն ալ չըլլայ Ատոմ, երբ անոնցմէ մին՝ Վարձ, Մեծ. Հօր համաձայն, Ատոմի հետ նահատակուած է:

Մինչ կը դժուարիմ Հ. Թորոսեանի հետ երկու Ատոմ՝ ընդունելու, համամիտ եմ ա-

8 Հ. Աճառեան երկու Ատոմ Գնունի կ'ընդունի, մէկը՝ նահատակ եւ միւսը՝ մասնակից Վարդանեանց եւ վախճանեանց պատերազմներու (Հայոց անձնանունների բառարան, Ա., Երևան 1942, էջ 254):

նոր՝ թէ Փարպեցիին եւ Ատոմեանց վկայարանութեան մէջ յիշուած Ատոմ Գնունիները մէկ անձ են, ընկեր Վահան Մամիկոնեանի. ա. Երկուքին մէջ ալ գլխաւոր անձը Ատոմ կը ներկայանայ միեւնոյն նկարագրով. ք. Գնունեաց տոհմէն է եւ տէր. գ. Փարպեցիի մօտ Ատոմ անբաժին է իր Առաստոմ եղբորմէն, իսկ վկայարանութեան մէջ որդիէն: Առաստոմ կրնար եւ որդի կոչուիլ իրբեւ կրտսերագոյն եղբայր⁹. Գ. Ներսէճ Երուանդունին ընկերն է Ատոմի եւ Վահանի. Կ. «Եղիշէ Կամսարականաց մէջ կը յիշէ զոմն Վարձ, զոր Փարպեցիին կը կոչէ Վարձայ, որոնցմէ առաջինն կը յիշեցնէ մեզի «Վարս եւ երկրորդն զՎարձաւոր (ընկերք Ատոմայ)». հաւանական է՝ որ Վարս ուսանիկ նոյն լինի Եղիշէի Վարձ եւ Փարպեցու Վարձայ կոչուած Կամսարականին հետ... Վարս յիստան տանէ եւ Եղիշէի Վարձ յազգէն Կամսարականաց (հմմտ. Կոզեան, Կամսարականները, էջ 101), կրնան դիւրաւ միարանիլ իրարու հետ եւ միեւնոյն անձն ըլլալ»: Գ. Ատոմ՝ Վասակ Մամիկոնեանի նահատակութեան վայրէջն խոյս կու տայ իր ընկերներովը եւ Հայոց աշխարհն անցնելով կը նահատակուի: Ղազար կը յիշէ Ատոմի մինչեւ հարածունն ու փախուստը եւ ապա վկայարանութիւնն է որ կը խօսի (Բագմ. 1900, էջ 202—206):

Թէ վկայարանութեան եւ Ղազարի Ատոմ Գնունիները միեւնոյն անձն են կարելի է ցուցնել զոյգ պատմագիրներու լուծութենէն եւ չէ կարելի է. Ազգերեանի արդարացունն ընդունիլ թէ՛ «Առանձին միոյ գաւառի պատմութիւն է եւ ոյս պատճառով լուծած (Վարք եւ վկայարանութիւն Սրբոց, Բ., Վենետիկ 1811, էջ 66—89) «Վկայարանութիւն Ատոմեանց առաջնոց եւ վերջնոց»): Մասնական քանի՛ քանի՛ դէպքեր ու խնդիրներ հայ մատենագիրներու գրչի նիւթ եղած են:

Ինձ կը թուի թէ վկայարանութիւնը շարունակութիւնն է Ղազարի պատմութեան կորուսած մասին ու հատուածին: Կարծես սոյն պակաս կտորը հանուած է եւ անով վկայարանութիւնը հիւսուած ըլլայ: Ղազար կը գրէ՝ «Ընտրութեան ցանկացողք եղին եւ արժանիք ընդ սրբոց ասպետին Մահակայ եւ ընդ սրբոց քաջին Վասակայ Մամիկոնեանի եւ

⁹ Կարելի է նաեւ խորհիլ թէ Ատոմ իր Վարս որդւոյն հետ նահատակուած ըլլայ, իսկ թէ Առաստոմի վերջն ինչ եղած է՝ կ'անգիտանանք: — Չեմ կարծեր թէ Վարս՝ Առաստոմ անուան ազգազունն ըլլայ:

կատարեցան աւուրն եւ անուանք են այսոքիկ...» (էջ 439): Մինչ վկայարանութիւնը կը գնէ՝ «Արդ որք յայսմ տեղուջ հանդիպեալք կատարեցան են այսոքիկ՝ գլխաւորն սուրբն Ատոմ որդւոյն իւրով յազգէն Գնունեաց, սուրբն Վարսայ յիստան տանէ, սուրբ Ներսէճ յԱրուանթունի տանէ, սուրբն Վարձաւոր եւ այլ բազմութիւն սուրբ ընկերացն, որք նահատակեցան ընդ նոսա»:

Բայց պէտք է խոստովանիլ թէ կան քանի մը կէտեր, որոնք մեր վարկածը կը տկարացնեն. այսպէս՝ Ղազարի մօտ նահատակուած պիտի նշանակուէր Ատոմի Առաստոմ եղբայրը, մինչ վկայարանութեան մէջ անոր որդին յիշուած է: Դէպքը տեղի կ'ունենայ Պերոզ Թագաւորի օրով, իսկ վկայարանութեան մէջ կը գրուի «ի ժամանակս Յագկերտի»: Գուցէ կարելի ըլլայ Հ. Թորոսեանի հետ ընդունիլ թէ Ատոմի կրտսեր եղբայրը իրբեւ որդի նշանակուած ըլլայ եւ Պերոզ իրբեւ հարածող անուանուած է՝ Յագկերտ (հմմտ. վերը):

Այս հարցը իր իսկական լուծումը կրնայ գտնել, երբ Ղ. Փարպեցիին ամբողջական եւ լաւագոյն բնագիրը (Պատմութեան) գտնուի եւ անոր մէջ տեսնուի ՀԳ. հատուածին վերջին մասը:

Պատշաճ է դիտել՝ որ Ատոմեանց վկայարանութիւնը նմանութիւն ունի չորս գրութիւններու հետ: Ասոնք են՝ Սերաստիայի Բառասուն Մանկանց վկայարանութիւնը (Պարսիկի մը քրիստոնեայ ըլլալն եւ հայ քրիստոնեայի մը ինքզինքը հովիւ կեղծելը), Սահակ-Համագասպ Արծրունիներու վկայարանութիւնը (Սահակի եւ Ատոմի որդւոյն նահատակութեան պարագաները (ԺԲ. Սովերք, էջ 76, ԺԹ. Սովերք, էջ 79), Ղազար Փարպեցիի պատմութիւնը (հմմտ. հտձ. ՀԳ. եւ ԺԹ. Սով., էջ 76), բայց մանաւանդ Եղիշէի պատմութիւնը (հմմտ. էջ 12, 29, 30, 31 եւ ԺԲ. Սով., էջ 70): Մանրամասնութիւններու իջնարու եւ յառաջբերութիւններու հարկ չկայ:

Յաւելում եւ այս: Մերախորեան (Նկարագրական Ուղղեւորութիւն... Կ. Պ. 1884, Ա., էջ 131, 143 եւ 144) կը գրէ թէ իր ճամբորդութեան միջոցին կը հանդիպի Իշխանագոմ եւ հոն տապանաքարերու մէջ անընթեռնի թուականով հետեւեալ յիշատակագրութեան կը պատահի. «է Ողբ Աստ սպանաւ մեծն ի նախարարս, որոյ անունն Ատոմ» . ու

կ'ըսէ «հաւանական է որ Եղիշէ պատմարանին յիշած Գնդունեաց (կարգալ՝ Գնունեաց) տոհմի Ատոմն եղած լինի»: Ապա կ'աւանդէ թէ Ոչխրանց գիւղի մօտերը կայ սուրբ Ատոմայ մատուռ մը — կիսակործան — որ Ս. Ատոմի անունով ոչխար կը մորթեն եւ թէ ժողովուրդին բերնէն քաղած է հետեւեալ աւանդութիւնը. Այժմեան վարի Ոչխրանց գիւղի մէջ նահատակուած են Ատոմեանք (Մանածիհր Ռչտունի) պարսկական եւ արեւաշատական մողեկրօնութեան առջեւ եւ կ'աւանդուի թէ այն ատեն ոչխարի նման մորթուած լինելուն պատճառաւ գիւղիս անունն մնաց Ոչխրանց. այս առթիւ Ս. Ատոմայ համար կ'ըսուի թէ՛ այն բլրակի գլխին, ուր յանուն իւր մատուռ շինուած է, թաշկինակի մէջ մի մեծ քար դրած՝ պարստիկի նման դարձնելով նետած է առ Պարսիկ թշնամիս դէպի հարաւ. այս աղագաւ նոյն ցար կը կոչուի Ալիխիցար» (Թաշկինակի քար):

Այսքան Ատոմի մասին: Անոր եղբորը Առաստոմի նկատմամբ վերոյիշեալներէն աւելի տեղեկութիւն չկայ: Նա Ատոմի ցաւին ու փառքին դրեթէ միշտ մասնակից է ու հաղորդ, սակայն ճարմայնանու կուրսին մէջ անոր անուան բացակայութիւնը կամ լուծութիւնը ուշադրութիւն կը գրաւէ:

Չեմ կրնար ստուգապէս հաստատել թէ անոնց եղբայրն ըլլայ Վահան Գնունի, որ թէեւ մանկահասակ՝ Աւարայրի պատերազմի մէջ մարտիրոսական պսակին կ'արժանանայ: «Ստացեալ գհաւատոյ վահան, յուսոյն զրահիւք ծածկեալ գիրկականն սաղապարդ ի գլուխ եղեալ՝ գնշան խաչին» (Շարական Վարդանանց):

Այս պատկառելի դէմքերէն յետոյ Գնունիներու զարմէն ծանօթ է Գնել, որ Բարդէն Կաթի օրով (490—516) Պարսկաստան գրուած թղթին մէջ իրբեւ «Տէր Գնունեաց» կը յիշուի (Գիրք Թղթոց, էջ 42): Արդեօք յախճաթն է անոր հետ նոյնացնել Գնեալ, որ Ներսէս Կաթ. Բագրեւանդացիի ժամանակ (547—557) համախմբուած եկեղեցականներու եւ նախարարներու մէջ է եւ անոնց հետ կը կնքէ «Միարանութեան ուխտ» (անդ, էջ 72): Ապա երեւան կու գայ Մծեծ կամ Մեծիծ Գնունի, որ Հոններուն կը յաղթէ եւ Պարսիկներէն մարդպան կ'անուանուի: Ասորդի (էջ 82, հմմտ. եւ Տաշեան, Յուլիան, էջ 172), Կիրակոս Գանձակեցի (Պատմ. Հայոց, Վենետիկ 1865, էջ 23) եւ Սամուէլ

Անցիլի (Ժամանակագրութիւն, Վաղարշապատ 1893, էջ 82) համաձայն 30 տարի սոյն պաշտօնը կը վարէ, բայց անոր կառավարութեան շրջան կը տրուի — ընդհանրապէս 517—535 (հմմտ. Ազգապատմ., Ա., Կ. Պոլիս 1912, էջ 519. կարեւոր՝ Grousset R., Histoire de l'Arménie, Paris 1947, էջ 237—238): Յովհաննէս Կաթ.ի մօտ Մծեծի անունը անյիշատակ կը մնայ: Հ. Հմ. Համարեան Մծեծ Գնունիի երկարատեւ մարդպանութիւնը (նոյն իսկ գոյութիւնը) երկրայական կը գտնէ, նկատելով որ Ներսէս Բ. Կաթողիկոսի Դուինի մէջ գումարած ժողովին վաւերական արձանագրութեան մէջ անոր անունը չկայ, դարձեալ որ այս շրջաններուն (509—550) պարսկական մարդպանները կարճատեւ կառավարութիւն կ'ունենային — ընդհանրապէս եւ թէ Յովհաննէս Կաթողիկոս անոր անունը մեզի չէ աւանդած (հմմտ. Հանդէս Ամսօրեայ, 1912, էջ 532): Ստուգիւ նշանակալից կարելի է համարիլ Մծեծի անունին բացակայութիւնը Դուինի ժողովին մէջ: Ի՞նչպէս կրնար անոր անունը անտեսուիլ, երբ անդամներու անուններն բժանդորէն կը յիշուին եւ դիտողութիւն կ'ըլլայ թէ՛ «ոչ ոք արտաքոյ մնաց յաշխարհականաց ի յայս կամաւոր գործոյ» եւ Գնունիներէն Գնեալի անունը կը տրուի (Գիրք Թղթոց, էջ 74):

Բիւզանդիոնի Հերակլ կայսրը Յունահայաստանի սահմանները գծելէ վերջ իրբեւ կառավարէ իր բաժինին «ի Հայաստան երկրէ (Սերէոս, Պատմ. ի Հերակլ, Թիֆլիս 1913, էջ 101) կ'առաքէ Մծեծ Գնունի¹⁰ մը, որ Պարսիկներու դէմ անվեհեր կը կուրի եւ եզր կաթողիկոսը կը համոզէ Յոյներու հետ կրօնական հաղորդութեան մէջ մտնելու, իսկ Պարսկահայաստանի հողերը կը կառավարէ վարազտիրոց Բագրատունի ասպետը: Այս պարագան Մծեծին հաճելի չ'ըլլար: Եւ կը սկսի՝ «առնել չարախօսութիւն առ Ռոստոմայ իշխանին, որ յԱտրպատական յաշխարհին»: Հետեւեալքը. Վարազտիրոց հալածանքի ենթարկուելով կ'ապաստանի յունական արքունիքը, ուր Հերակլի դէմ դաւադրութիւն մը կը նիւթուի: Մասնակցողներէն է նաեւ Դաւիթ Սահառունին, զոր կայսեր հաւատարիմ Մծեծ Գնունին կալանաւորելով

¹⁰ Աղաւաղուած Մծեծ Գնունի. հմմտ. Հ. Յ. Տաշեան, Մայր Յուլ. Վիենն. Միխթ. ի Վիեննա, էջ 114:

«առաքելի պաղատան»։ Սակայն Դաւիթ ճամբորդութեան միջոցին կը յաջողի բեկանել շղթաները եւ հետեւակ պահապանները սպաննել։ Ապա հայկական բանակը սիրաշահելով Մէջտի վրայ գրոհ կու տայ եւ զինքը իր Վարդ-Գնէլ եղբորը հետ 635ին չարամահ կը մեռցնէ (Սերէոս, էջ 101—102. Ալիշան, Շիրակ, էջ 142)։

Յովհաննէս կաթողիկոսին Մէջտիին այս քաղաքական գործունէութիւնը անձանօթ կը թուի եւ կամ կը գոհանայ անոր կրօնական գործունէութիւնը — Եզրի Յոյներու հետ յարաբերութեան հարցը — հաղորդելով (Պատմ., էջ 44—45)։ Իսկ Վարդան կը գրէ. «Յայսմ ժամանակի կարգէ (Հերակղ) զօրավար Հայոց զՄեծեթ զոր սպաննեալ Դաւիթ Սահառունի ինքն լինի ի իշխան» (Պատմ., էջ 62)։ Ծանօթ է մեզի Մեծ անուն թիկնեղ զօրական մը, որ Հերակղի թոռն Կոստանդ Բ. ի եղբական մահէն — այս է՝ բաղնիքի ատեն Անդրէաս ծառան շուր լեցնելու անօթը անոր գլխուն ուժգնօրէն զարնելով զանիկա մեռցնելէն վերջը՝ զինուորներէ եւ անոնց առաջնորդներէ հակառակ իր բացորոշ կամքին կայսր կը հռչակուի, բայց ինչպէս Հ. Ալիշան կը դիտէ՝ «Եւ ոչ մի տարի ահամայ կայսրութեան անունը կրելով թագին հետ իր թագազանդուր գլուխն ալ կորոյս, զոր Սիրակուսայէն խաւրեցին ի Կ. Պոլիս առ օրդին Կոստանդայ Կոստանդին Դ.» (Յուշիկք հայրենեաց, Բ., էջ 335)։

Հ. Չամչեան պատմագիրներու այլազան տեղեկութիւնները կը ջանայ միարանել ըսելով՝ «Պարտ է ասել թէ երկու էին Մէջտ, առաջինն կարգեալ ի Պարսից մարզպան Հայոց յաւուրս Ղեւոնդեայ կաթողիկոսի եւ Ներսէսի Աշտարակեցոյ, իսկ երկրորդն էր ի ծննդոց թոռնն նորա, որ եւ կարգեցաւ ի Հերակղէ զօրավար եւ իշխան Հայոց եղևոց ի բաժնին Յունաց յաւուրս Եզրի եւ սա յետոյ ընտրեցաւ կայսր» (Պատմ. Հայոց, Բ., էջ 325 եւ 528. հմմտ. Օրմանեան Մաղ. արքեպ., Ազգապատում, Կ. Պ. 1912 եւ Երուսաղէմ, 1927, Ա., էջ 5, 9, 703 եւ Գ., էջ 89. Երուսաղէմ)։

Մէջտ Ա. ի մասին արդէն արտայայտուեցայ, իսկ երկրորդին նկատմամբ միթէ զարմանալի չէ՞ որ հայ պատմագիրներու մօտ որ եւ է ակնարկութիւն չկայ անոր կայսրութեան մասին։ Դարձեալ ինչպէս միարանել պատմութեան թատերապրերը եւ թուա-

կանները։ Մէջտ կայսրը կը սպաննուի Արեւմուտք՝ Սիրակուսա եւ Մէջտ զօրավարը Արեւելքի մէջ՝ յունական Հայաստանի մէջ եւ մին 635—636ին ու միւսը՝ 668ին։ Այնպէս կ'երեւայ թէ պէտք է զանազանել երեք Մէջտ, մին՝ մարզպան, միւսը՝ կիւրապաղատ եւ մէկալը՝ կայսր։

Շապուհ Բագրատունիին վերագրուած պատմութեան մէջ կը յիշուի ի տանէն Գնունեաց Գորգ Զաֆրան անուն անձ մը որ ծառան է Գրիգոր Դէրէնի։ Անոր հետ կ'ունենայ երջանիկ եւ ուրախ օրեր, անոր հետ կ'ուտէ ու կը խմէ մեծածախս սեղանէն։ Նաեւ շայլութեան հետեւանք անոր հետ կ'աղքատանայ։ Սակայն ցաւերու օրերու մէջ, զրկանքներու ժամանակ Զաֆրան Գրիգոր Դէրէնի հաւատարիմ ծառան կը մնայ։ Երկուքն ալ իրենց չքաւորութեան շրջանին, թէեւ առանց գիտնալու, սակայն անձնագոհութեամբ կը հիւրընկալին «հալածական արքայն Բարեւալոց»։ Որ երբ Բարեւալի իր գահին վերստին կը տիրանայ եւ հոն Դէրէնն ու Զաֆրանը իրրեւ պանդուխտ կը գտնէ, զանոնք սիրով ու մեծարանքով իր քովը կ'առնէ։ Յետոյ Բարեւալիներու թագաւորը զանոնք զինուորներով Վասպուրական կ'առաքէ զբաւելու ժառանգական հողերը, որոնց մէջ է Վան։ Երկու հաւատարիմները կը հասնին «ի դաշտն Դատվանէ»։ Եւ մինչ Դէրէն իր երկրին տիրացած՝ իր Գաղիկ եւ Համագասպ եղբայրներու հետ բանակցութեան մէջ է, Զաֆրան ճամբայ կը հանէ՝ յորդորելով՝ «Գնա՛յ դու եւ տիրացիր բերդերոյն խոյ ի Վանայ եւ նստո՛յ զորդին քոյ զՎարդեվան եւ դետացո՛յ ինձ»։ Գէորգ Զաֆրան անոր հպատակելով եւ Վան քաղաքը գրաւելով զայն իր Վարդեվան կամ Վարդան որդւոյն կը յանձնէ. «Եւ գնաց Զաֆրան եւ մտաւ ի Վան եւ էառ զբերդերն եւ ետ ի որդին իւր ի Վարդան, նոյնպէս եւ բերդն Սեւանայ էառ եւ ետ ի քուրորդին իւր եւ զՆիկան ամուրն ի հօրեղբորն իւր եւ զՄարանդակայ ի փեսայն իւր, զՇմաւոնի եւ զԹորոյ ձորն յԱրձախի տվել ի գերին (թէ ի քեռի՞ն) իւր։ Եւ զայս ամենայն այսպէս արար եւ ապա յղարկեաց առ պարոնն իւր Դիրենն» (Պատմութիւն, էջմիածին 1921, էջ 40—48)։

Թէ ասկէ վերջ Զաֆրան եւ Վարդան ինչ կ'ընեն եւ ո՞րքան կ'ապրին՝ լուծած է։

Շապուհի այս տեղեկութիւններուն ալ կարելի է մերձեցնել Հ. Ալիշանի այն եզ-

րակացութիւնը, որ անոր ամբողջ գործին համար հանուած է. «Նկատելով պատմութեանս բովանդակութիւնը պէտք է ըսել, թէ հեղինակն կը սիրէ աւելի զրուցախառն դէպքերու նկարագրութիւնն տալ, քան իսկապէս պատմութիւն մը յօրինել։ Այս տեղ ամփոփուած են հայ պատմագիրներէն եւ աւանդութենէն կէս պատմական եւ կէս առասպելական նկարագրով դէպքեր...։ Իրրեւ ազդելը պատմութեան համար որ եւ իցէ արժէք չունի անիկա, բայց ընտիր ազդելը է աշխարհագրութեան եւ ազգագրութեան համար» (Մատենադրական հետազոտութիւններ, քննութիւն եւ ընագիր, Ա., Վիեննա 1922, էջ 208—209)։

Բագրեւանդի ահեղ ճակատին մէջ (775) քաջարար մաքառող է Վահան Դաշնակ Գնունի, որ սակայն Սմբատ ու Սահակ Բագրատունիներու եւ Մուշեղ ու Մանուէլ Մամիկոնեաներու հետ կը մեռնի (Ղեւոնդ Երէց, Պատմ., էջ 151, 150, Պատմ. Հայոց, Երեւան 1947, էջ 407)։

Գնունիները հոս կորսնցնելով արին Վահան՝ կը սկսին տարակուսիլ իրենց կեանքին ու ազգատոհմին շարունակութեանը վրայ, որովհետեւ Իսմայէլացիները օրէ օր կը դժբանային։ Ուստի դիմում կը կատարեն Աշոտ Բագրատունիին. «Որոյ երթեալ հազար արամբ յԱղիովիտ գաւառ եւ առ ինքն գումարեալ զամենայն ազգն արիւ իւրեանց տանի բնակեցուցանէ ի Տայս» (Վարդան, Պատմ. Հայոց, էջ 77. 150, անդ, էջ 426)։

Թէ Գնունիներն ո՞րքան ատեն Տայքի մէջ կը բնակին եւ հոն ինչ գործունէութիւն կ'ունենան՝ այդ մթութեան քողով ծածկուած է։ Սակայն անոնցմէ զոնէ մաս մը յետագային Վասպուրական կը հաստատուի եւ Արծրունիներու հետ սոյն ընդարձակ գաւառին ապաստութեան համար կ'որոշի։ Հոս ապրած պիտի ըլլայ Հազր (գուցէ Հազիր կամ Ղազար կամ Գազրիկ), որուն պատմութիւնը կը մնայ անձանօթ։ Անուան ծանօթութիւնը կը պարտինք իր Գրիգոր որդւոյն, վասն զի ասոր անունը տուած ատեն Թովմաս Արծրունին կը յաւելու՝ «որդի Հազրի»։ Գրիգորի մասին սոյն պատմագիրը կը հաղորդէ որ «այլ եւս հարազատօք եւ զօրօք իւրեանց» Աշոտ Արծրունիի եւ ուրիշ իշխաններու հետ Սմբատ Բագրատունիին օգնութեան կը փութայ Մուսի դէմ (851) եւ պատերազմը շահելու նպատամատոյց կ'ըլլայ (էջ 109)։

Ուրիշ Գնունիներ՝ վեցեակ մը Վահան, Շապուհ, Ապուսէթ, Պատրիկ, Ապուսելմ եւ Վարդան հետեւելով (852ի առեւնները) Գուրգէն Արծրունիի հրաւերին՝ Ապուհեղմի եւ այլազգիներու դէմ պատերազմի կ'ելլեն։

Արեւնահեղ պատերազմ է այս (852ին)։ Թովմաս կը գրէ. «Դիմեցին խուռն յանդուգն յարձակմամբ եւ բախեցին զգունդն եւ պատուեցին զուզմն եւ զարձուցին զայլազգիսն եւ գոչէին վիշապաձայն եւ բեկանէին առիւծարար եւ հարկանէին վարազարար եւ մատնեցին ի սատակունմն եւ ի պարտութիւն եւ իւրաքանչիւր այր զախոյեան իւր յերկիր հարեալ եւ ինքն զկնի միւսոյն ճեպէր...։ Եւ եղիւ թիւ սպաննելոցն Ռ. թող զրազում վիրաւորսն եւ զկողոզուտն եւ զձերբակալսն» (էջ 147)։

Յուսուի ոստիկանին օրով Գնունիներէն կը յիշուին իրրեւ պանծալի վկաներ իրենց կրօնական համոզումին համար համշիրակները Գուրգէն ու Դաւիթ, զորոնք Ասողիկ կ'անուանէ «մեծք եւ պատուականք» (էջ 167)։ Մարտիրոսութեան յառաջ թէ ինչ գործունէութիւն ունեցած են, այն մեզի չէ աւանդուած, բայց այնպէս կը թուի, թէ անոնք եւս թէպէտ դեռ «յարբուս մանկութեան» (Յովհ. Կաթ. Պատմ., էջ 138) Յուսուփի չեն ուզած հպատակիլ եւ անոր խուզարկու ասպատակաւորներու ձեռքերու մէջ կ'իջնան։ Եւ ասոնք՝ զանոնք բռնաւորին առջեւ կը հասնեն։ Քրիստոնէական կրօնէն հրաժարելու համար անոնց հրապուրիչ շատ խոստումներ կ'ըլլան, սակայն զուր տեղ։ Յուսուփ մահուան վճիռը կ'արտասանէ։ Գուրգէն ու Դաւիթ կը տարուին «ի Թէատրոն» Դուլինի (Յովհ. Կաթ. Պատմ., էջ 138) եւ հոն երկուքն ալ ծաղիկ հասակի մէջ կը նահատակուին եւ այն՝ նախ կրտսերը՝ երէցին յորդորին վրայ։

Միւրիթար Այրիվանեցին կը հաղորդէ թէ 921ին Դաւիթ եւ Գուրգէն իշխանները կատարուեցան (Պատմ., էջ 71), իսկ Ասողիկ (Պատմ., էջ 168) եւ Վարդան (Պատմ., էջ 87) անոնց տօնախմբութիւնը կը զնեն Մարերի քանին, մինչդեռ Յովհ. Կաթողիկոսը (Պատմ., էջ 138) նոյն ամսոյն քանուկութիւն կը նշանակէ։

Ինչպէս Հ. Չամչեան արդէն ուշադիր եղած է, այս նահատակներու կատարումը

Յայտարարումներու մէջ Բուզայի օրով¹¹ եւս նշանակուած է, որով համանուն զոյգ եղբայրներ երեւան կու գան (Պատմ. Հայոց, Բ., էջ 1035, հմմտ. Հ. Աճառեան, Հայոց անձնանունների Բառարան, Երեւան 1942, էջ 511):

Յովհան Պատմաբանի (Պատմ., էջ 137—138) եւ Ասողկի (Պատմ., էջ 167) Գուրգէնի ու Դաւիթի նուիրած տողերուն մէջ ոչ թէ միայն պատմական կէտերու, այլ եւ դադարի մեծ նմանութիւն կայ եւ մէկուն մէկալէն օգտուելն ակնբախ է: Աւելորդ է կրկնել թէ ասոնց եւ Սահակ-Համազասպ Արծրունեաց վկայարանութիւններու նմանութիւնն ալ աչքառու է:

Գուրգէն եւ Դաւիթ Գնունիներու նահատակութիւնն երգած է Ս. Հէքիմեան (Բագմավէպ, 1848, էջ 122—124):

Շապուհ Բագրատունին կ'աւանդէ, թէ (անդ, էջ 82) Վասպուրականի Գուրգէն իշխանը հրաւէր կարդալով կը յաջողցնէ, որ Սմբատ Բագրատունի թագաւորին Ափխազներու դէմ ըրած ասպատակութեան մասնակցին Գնուններն ալ, սակայն անոնց անունն ու դործը կը լռէ:

Ուշիկ կաթողիկոսը 976ին Նախավկայի վանքին թեմ ու վիճակ կը հաստատէ Նախիջևան գաւառը — հրամանով Աշոտ թագաւորին — եւ կը գրէ հաստատագիր կոնդակ մը, որուն մէջ կը յիշուին հայազգի շատ մը իշխաններու անուններ: Անոնց կարգին նմանապէս Գնունի մը՝ Գէորգ: «Եւ յաւարտումն եղեւ բանիս եւ գրիս ձեռամբ մեծանուն տեառն Ուշիկայ կաթողիկոսի ամենայն Հայոց եւ տէր Բարգէշի եւ մեծ իշխանացն Ապղարիպի իշխանին Հայոց եւ Վրաց, Վասակ իշխանին Սիւնեաց, Գրեգոր իշխանին Ռշտունեաց, Գէորգ իշխանին Գնունեաց, Շապուհ իշխանին Արծրունեաց»:

Նոյն թուականին Աշոտ թագաւորին Նախավկայի վանքին տուած նուիրագրին մէջ ալ կը հանդիպինք Գէորգ Գնունիի անունին եւ երկուքին մէջ ալ Արծրունի իշխանէն յառաջ յիշատակուած: Նաեւ 981ին Հոփիսիմէ արքայազստեր կտակագրին մէջ Գէորգին անունը Շահապ Արծրունիէն առաջ դրուած է (Ասոնց մասին հմմտ. Մ. արքեպ. Սմբատ)

¹¹ Անոր ժամանակները կը նահատակուին երկրորդ Ատովմեանները (հմմտ. Ասողկի, էջ 168՝ «էին ի սոցանէ արք եօթն, որոց գլխաւորին անուն Ատով կոչուի, որ էր յԱյրաի գաւառէ յՍսերան գեղէն», հմմտ. նաեւ Յովհ. Կաթ., էջ 123—124):

տեանց, Նկարագիր Երնջակայ Ս. Կարապետի վանից եւ շրջակայից նորին Տփլիս 1906, էջ 411, 419 եւ 424 եւ Հ. Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ., Վիեննա 1942, էջ 536 եւ 580):

Գէորգով կը ստիպուինք Գնունիներու տոհմին պատմութիւնը փակել: Սակայն միշտ բաղձալի եւ հետաքրքրական կը մնայ զիտնալ՝ թէ ե՛րբ եւ ի՛նչ պարագաներու տակ այդ զարմին կենսունակ արմատն ու ճիւղերը ամլութեան եւ չորութեան կը դատապարտուին:

Այսպէս Ժ. դարուն մէջ — գուցէ — Պատմութեան բեմէն կը հեռանան Գնունիները, թէեւ դեռ այսօր պակաս չեն այդ մականունով ընտանիքներ: Անոնք կը հեռանան սիգապանձ ու անբասի՛ր: Չունին իրենց երամին մէջ հաւատուրաց անձ եւ դասալիք զինուոր ու զօրավար: Հայ արքունիքին եւ նախարարութիւններու հետ լաւ յարաբերութիւն կը մշակեն եւ միշտ կազմ ու պատրաստ՝ անոնց հետ հասարակաց թշնամիին դէմ ոգորելու: Հաւատքի եւ հայրենիքի համար կը զոհեն փառք ու հարստութիւն. հանգիստ ու կեանք: Միշտ քաջակորով եւ պատնէչի՛ վրայ: Յաղթութեան դարնեայ պտակը՝ իրենց վարսերուն վրայ հանդչած:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ՎԱՆՔԵՐԸ

(Շարունակութիւն):

5. ԿԻՉԱՆԻ ԱՆԱՊԱՏԸ

Համանուն գիւղի արեւմտեան կողմը: «Բերդաձեւ սարին վերայ շինուած է անտաշ քարով մի եկեղեցի երկու կամարների վերայ: Բոլորովին անփնաս է եւ կանդուն: Ունի եւ միարանից համար մի քանի խուցեր, հանգստարան զարդարուած խաչարձաններով, ուր կան եւ վարդապետաց գերեզմաններ¹⁴» (Արցախ, էջ 167):

¹⁴ Ուշիկայի մէջ կայ Կարմիր վանք եկեղեցի մը, որ չեմ կարծեր՝ թէ իսկապէս վանք եղած ըլլայ (Արցախ, էջ 192):

6. ԿՕՇԻԿ ԱՆԱՊԱՏԸ

«Հիմնարկուած է Քոլատակ գիւղի վերեւ համանուն գետակի ձախ կողմը» (Արցախ, էջ 168): Ունի երեք տաճար, երեքն ալ անտաշ քարով շինուած: Միջին տաճարի բեմին ժողովրդահայեաց երեսին վրայ քանդակուած է՝ «Հասանայ եւ Մամա խաթունին թոռն Գ. հետ ի դանն դնացի, յամի... իմ ազգէն թափեցի դ... ատաստանաւ զհարկանին մեր... Ուերխան, Մարծպան, Մամիկոն կամեցաք նորոգել զմեր գերեզմանատունս, ես էրիվան... եցի զսուրբ Ստեփաննոս եւ նորոգեցի զայլ եկեղեցիքս եւ զարդարեցի Մխեթար եղբաւր իմոյ... թ ես Մարտիրոս. ես Սեւադա տվի զԳրեգորանաց, զՄուրնդանաց, զԳեղմարանց ի սուրբ եկեղեցիս... մն Ժ. աւր ժամ Հասանա զատկին, Բ. Մամա խաթունին՝ Վարդավառին. Ա. Ռուզու... Բ. Ուերխանին յայտնութեան... կատարին. որ հաւատակի կամ զրկել ջանա զայս տեղիս ի սուրբ Գէորգա, ոսոխն նորա Աստուած եղիցի... գրեցաւ ի թվ. Հայոց 207»:

Ինչպէս այս արձանագրութիւնը կը վկայէ Կօշիկ անապատը իշխանագուններու գետնադամբանն եղած է: Գաւիթին մէջ կան քանի մը յաւերթօրէն ննջողներ: Անոր որմերէն մէկուն վրայ կը կարդացուի՝ «ՈՂԳ. Յանուն Աստուծոյ եւ Պոռ յորդի իշխանին Վասակայ (գրուած՝ Վակա) յուսով միարանեցայ Կոշիկ անապատոյ, տվի խաչ, աւետարան, (տօ)նապատճառ, միարանքս տվին սուրբ խաչի Զ. աւր ժամ, որչափ կենդանի եմ իմ մաւրն, յետ ելից իմոց ինձ. կատարիչքն աւրհնին, խափանիչքն դատին յաստուծոյ» — Ես Շղել, որդի... այ իմ ընչից զնեցի հող... բնակեցայ սուրբ Նշանիս, կամակցութեամբ եղբարց Կոշիկ անապատոյ եւ տվին ինձ ի տարին Բ. ժամ սուրբ Գրեգորին աղուհացն, Ա. իմ որդի Ուշախին, Ա. իւր մաւրն, յետ ելից իմոց ինձ:

Այսպէս՝ նաեւ այս արձանագրութիւններէն յայտնի կ'ըլլան տաճարներու անունները՝ Ս. Գէորգ, Ս. Ստեփաննոս եւ Ս. Նշան: Այսօր միարաններու սենեակներն աւերակա կոյտեր են: — Կոշիկի մէջ 1493ին Աւետարան մը կը գրուէր (Արցախ, էջ 168—169 եւ 247):

7. ՀԱՄԱՄԻ ՁՈՐԻ ԱՆԱՊԱՏԸ

Համամի ձորի ձախ ափին կայ եկեղեցի մը, որ անապատ կոչուած է: Գուցէ ճգնա-

տեղի կամ շատ փոքրիկ վանք՝ եղած ըլլայ (Արցախ, էջ 183):

8. ՀԱՒԱՊՏՈՒԿԻ ՎԱՆՔԸ

Գանձասարի, Սոխանաբերդի եւ Ուշիկ գետակի մօտ ձուածեւ սարի մը զազաթին կանդնած է այս վանքը, որ փոքր ու թաղակապ է եւ պղտիկ դաւիթ մ'ունի: Հետեւեալ արձանագրութիւնները կը ներկայացնեն անոր պատմութիւնը՝ «Թիւն ՈԺԲ. Էր յիշխանութեան Հասանա, որդո Վախտանգա եւ ամուսնո նորա Մամբանա, ես տէր Յոհան քվերորդի տէր Գրեգորո եւ Գէորգ եղբաւրորդի եւ այլ միարանքս շինեցաք զեկեղեցիքս ի փրկութիւն հոգոց մերոց եւ յիշատակ ծնողաց մերոց»: — «Յանուն Աստուծոյ եւ Աթանաս, որ Գրեգին երկիրն գնեցի ի Հաւուց պտուկ տվի. Հայր Գէորգ եւ այլ միարանքս տվին ի տարումն Գ. աւր պատարագ Նոր Կիրակէին, որ զհողն յեկեղեցոյս հանէ ՅԺԸ հայրապետացն նգոված է»:

Հաւապտուկ դամբանարան է Ջաջուռեանց ցեղին. հոն ամփոփուած են Սմբատ, Արուսեղ եւ Հասան (Արցախ, էջ 181—182. Լէօ, Իմ յիշատակարանը, էջ 383):

Աւետարանի մը յիշատակագրութեան են հետեւեալ տողերը, որոնք կը ցուցնեն թէ Հաւապտուկի վանքը աննշան վանք չէ եղած՝ «Ստացաւ զայս աստուածախօս աւետարանս յիշատակ եւ փրկութիւն հօր մեր բարեպաշտ իշխանին Ջաջուց եւ եղ ի սուրբ մենաստանն, որ կոչի Հաւապտուկ, որ է շինեալ յանուն սրբոյ Աստուածածնի եւ բնակութիւն եւ շիրիմ Ջաջուց իշխանին եւ նախնեաց մերոց... Գրեցաւ սա... ի գերահոգակ սուրբ ուխտ(ի)ս Հաւապտուկոյ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Լուսաւորչիս Գրեգորի ձեռամբ մեղապարտ Ստեփաննոսի...» (Ջալալեան, Ճամբ, Բ., էջ 216—217. հմմտ. Բարխուդարեան, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 234. Յովսէփեան, Ոսկերչական արուեստի մի նմուշ ԺԳ. դարում [Սոտակեաց Ս. Նշան], էջ 2, արտատպ. Գեղարուեստէ, 1911, Թ. 4. նոյնը՝ Ուղարկեանք կամ Պոռչեանք, Վաղարշապատ 1928, էջ 29):

9. ՄԵՏ-ԱՐԱՆՑ ԿԱՄ ՄԵՏ-ԻՐԱՆԱՑ ՎԱՆՔԸ

Քոյրտակ եւ Թրղուն գիւղերու մօտ, բարձր լեռնաբազկի մը սեռի հարթակին վրայ շինուած է Արցախի այս հոչակաւոր վանքը: